

Ա Ր Չ Ա Կ Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Թ Ն Ե Ր

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ու գարնան մեղմ անձրեւի մը քաղցրալուր երգէն յետոյ, խաղաղութիւնը օրհնութեան պէս իջեր է մեր ճամբուն երկայնքին:

Ու լուսինն ալ իր արծաթ շողերով անագեր է այսօր երէկի խաւար գիշերը, որ՝ իր ճերմակ գրկին անդորրութեան մէջ գիս հանգչեցուցած՝ ապագայ քաղցրանոյշ օրերու մեղրը կը թափէ հոգիիս երագկոտ բիւրեղ քաժակներուն:

Ս Պ Ա Ս Ո Ւ Մ

Սաղարթախիտ ծառերու հովանիին ու քու տարփատենչ նայուածքիդ տակ, միեւնոյն ըոպէին փայլեցան արցունքի վճիտ կաթիլը աչքերուս, եւ յիշատակի մարգարիտդ հովժփուն դեղձան վարսերուս մէջ:

Ու դուն գացիր... ու դեռ կուլամ ես:

Կարօտիդ կսկիծովը լճացած աչքերս, ի գո՛ւր կ'որոնեն քեզ հեռաւոր ճամբաներու երկայնքը ու հրատապ շունչդ կը փնտռեն, թողուած՝ հոգւոյդ չափ վճիտ մարգարտիդ մէջ:

Ու կուլամ... ու դեռ կը սպասեմ:

★ ★ ★

Եւ այսօր հեռաւոր ակնարկի մը քաղցրութիւնը կ'իշխէ հոգիիս բոլոր սէրերուն,

իւր պարիկի տեսլացած մականով. ու շուրջս կը տժգունին կարծես սա լուսաւոր քաղաքին բոլոր գեղեցկութիւնները, վերջալոյսի մը վերջին շողերուն նման:

Ու մշտարթուն ճրագի պէս լուսաւոր ու դողացող այդ սիրոյ վերտառութեան առջեւ, վաղնջական գունագեղ իղձեր կը մարին երագներու կէս ճամբին. ինչպէս վարդեր կը թօշնին վարդերու գրկին:

Ճ Ե Ր Մ Ա Կ Ե Ր Ա Ջ

Այս գիշեր ճերմկցեր էին երագներս նորէն, սպիտակ վարդերու վարդաստանի մը նման, ու սիրոյ արեւը հոն կը լայննար իր է՛ն համարձակ ու բարկ շողերու զեղումով:

Համբոյրը լոյսի պէս չէր դողար շրթներուս վրայ, ու նայուածքիս հուրը՝ անատուեր գեղեցկութիւններու անգայտ ու սուրբ խորհուրդներուն վրայ անվերապահօրէն կը հոսէր:

Ու խօսքը՝ խունկի պէս խնկաւէտ ու հուլաթեւ ու տարածուն՝ երագներու երագը կը սրսկէր, պարիկներու գիրկն հանգչած այդ անանուն աշխարհին, գաղջ ու արեգակնափայլ ոլորտին անդորրութեան մէջ:

Ես կ'ըզձայի որ վաղը գիշեր ալ՝ երագներս ճերմկնային, սպիտակ վարդերու վարդաստանի մը նման...:

ՆԱԶԵՆԻ